

սեւագոյն ամպերով ելլէ նէ, արեւ-
լեան կողմը շատ անձրեւի նշան է :

Արեւուն ծագած ատենը չորս դին
փայլուն սեւ ամպ երեւնայ նէ, անձրեւի
նշան է :

Կայծակ կամ ամպերու ճայթ մունք
որ կողմը ըլլայ նէ՝ անձրեւ գալու նշան
է . միայն փայլակը հիւսիսի կամ հա-
րաւի կողմերուն որ կողմը տեսնես նէ,
հոն կ'ըլլայ անձրեւը :

Եթէ հիւսիսի կողմէն շատ հով
փչէ, նշան է անձրեւի :

Ձկնկուլ թռչունը շատ լուացուի
նէ, շատ անձրեւ գալու նշան է :

Կովերը երբոր հարաւի կողմը եր-
կայն երկայն կրնային՝ անձրեւի նշան է :

Սրջիւնները երբոր իրենց հաւ-
կիւթները տեղէ տեղ կը կրեն, անձրեւի
նշան է :

Հաւերը երբոր կը վազեն, կը կըռ-
կըռան, անձրեւի նշան է :

Գորտերը դէպ 'ի ջուրը կը վազեն,
կը պոռան կը կանչեն, անձրեւի նշան է :

Երբոր կը տեսնես որ հովը կակուղ
կը փչէ, կ'ուշացընէ անձրեւը . ու կաղ-
նի ծառը շատ պտուղ որ տայ, ան տա-
րին անձրեւ շատ կ'ըլլայ :

Ամէն կենդանւոյ դէպ 'ի հիւսիս
փախչիլը՝ անձրեւի նշան է :

Կռունկը ատենէն առաջ գայ նէ,
աշունը երկայն կը քըշէ ու ձմեռը ան-
ձրեւ ձիւն շատ կ'ըլլայ . եթէ կռունկը
ուշ գայ նէ, ձմեռն ալ ուշ կը մնայ :

Անակ ուրիշ շատ կենդանեաց
շարժմունքէն, ու լեռան ծառերուն
քիչ կամ շատ պտուղ ունենալէն՝ յա-
ջորդ ձմեռը կը գուշակուի :

9. 9



ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՔ

ԱՍՏՂԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Հետեւի նոր հոլերսն :

Հետեւի անունով գերմանացի քաջ
աստղաբաշխը երկու տարի առաջ մո-
լորակ մը գտեր էր, որ Ապրիլ քսուե-
ցաւ . նոյն անձը աս տարի յուլիսի առ-
ջի օրերը Տրիգէն քաղքին մէջ ըլլա-
լով՝ ուրիշ նոր մոլորակ մըն ալ գտեր
է, և ասոր մեծութիւնը իննեորորդ
ու տասներորդ կարգի աստղերուն
չափ է : Իտալիոյ աստղաբաշխներն
ալ մօտեւոս գիտելով ստուգեցին աս
մոլորակին գոյութիւնը, և կ'ըսեն
թէ ասիկայ ալ հաւանական կարծեօք
այն մանր մոլորակաց մէկն է որ հրատ
ու լուսնթագ մոլորակներուն մէջտե-
ղուանքը կը պտըտին :

ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Սեւի :

ԱՍԻԱՅԻՆ արեւելեան մեծ արշիպե-
ղագոսին մէջի Սողուքեան կղզիները
անուանի են իրենց բոյսերուն շատու-
թեանն ու աղւորութեանը համար :
Արմաւենիի տեսակներ կան հոն որ
անոնց մէկ տեսակին պտուղը սափա-
կ'ըսուի, ու խիստ առողջարար ու
համեղ է : Անկուսթան անունով
ծառ մը կայ որ պտուղը խաղողի, ե-
լակի, կեռասի ու նարնջի համերը
ունի . հռչակաւոր է նաեւ հացի ծա-
ռը, երեսոսը, հնդիկ ընկոյզը², թե-
քը՝ որուն փայտը նաեւ շինելու կը
գործածուի, քայեփուլ թիւն՝ որ պա-
տուական եղ ունի : Ասօգտակար ծա-

1 Գարեգէլ :

2 Հիւսիսային Բելիւզի :